ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

18.11.2020թ. ք. Իջևան

Նախագահ՝ Գ. Ավետիսյան /դեկան/
Քարտուղար՝ Ա. Ալեքսանյան

Առցանց կազմակերպած նիստին մասնակցել են Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը, Պ. Ասիլբեկյանը, Թ. Ստեփանյանը, Գ. Ալեքսանյանը, Ա. Սարիբեկյանը, Ա. Եգանյանը, ԵՊՀ ԻՄ-ի ՈՒԽ նախագահ Լ. Մադաթյանը, ֆակուլտետի ՈՒԳԸ-ի նախագահ Ի. Վարդանյանը, ֆակուլտետի ՈՒԽ-ի նախագահ Ա. Խոջումյանը, Ա. Ղարախանյանը: Նիստը անց է կացվել zoom.us հարթակում, գիտական խորհրդի նախագահն է Գ. Ավետիսյանը, քարտուղարը՝ Ա. Ալեքսանյանը:
Նիստի օրակարգը ներկայացրեց Գ. Ավետիսյանը:

Օրակարգ

1. 2020-2021- ուստարվա աշնանային կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների ամփոփում /Զեկ. Գ. Ավետիսյան /:
2. 2020-2021 ուստարում նախատեսված ավարտական աշխատանքների ըստ ղեկավարների և ուսանողների բաշխված ցուցակների հաստատում /Զեկ. Գ. Ավետիսյան/:
3. Ընթացիկ հարցեր:
   3.1 Ֆիանանսներ» կրթական ծրագրի IV կուրսի ուսանուղուհի Նվարդ Մելիքսեթյանին «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման» մրցույթին առաջադրելու մասին:

Բաց քվեարկությամբ 16 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց.

Որոշում՝ 3/1

¬ Հաստատել նիստի օրակարգը։

1. Լսեցին.- 2020-2021 ուստարվա աշնանային կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների արդյունքների ամփոփման մասին/ Զեկ. Գ. Ավետիսյան/:

Գ. Ավետիսյանը նշեց, որ առաջին ընթացիկ քննություններն իրականացվել են սահմանված ժամանակացույցին համապատասխան: Համավարակով և ռազմական դրությամբ պայմանավորված քննությունները կազմակերպվեցին հեռավար։ Նախապես ամբիոններում ընտրվեցին այն երեք դասընթացները, որոնց շրջանակներում պետք իրակացվեին ընթացիկ քննությունները և ստուգումները։

Գ. Ավետիսյանը նշեց, որ I կիսամյակի առաջին ընթացիկ քննություններին և մասնակցել են 118 ուսանող. «Ֆինանսներ» ԿԾ՝ 75 ուսանող, «Զբոսաշրջություն», ԿԾ՝ 43:

Ֆակուլտետում ընթացիկ քննությունների միջին ցուցանիշը կազմել է 3,53(4,40՝ անվճար համակարգում սովորողների շրջանում), նախորդ ուսումնական տարում՝ 2,90 է (4,01՝ անվճար համակարգում սովորողների շրջանում), իսկ ընթացիկ ստուգումների միջին ցուցանիշը 7,27 է (9,23՝ անվճար համակարգում սովորողների շրջանում), նախորդ ուսումնական տարում՝ 6,83 (8,89): Ցուցանիշները մեզ հուշում են, որ բարձրացել է ուսանողների առաջադիմությունը: Սակայն ամբիոններում պետք է իրականացնել խորքային վերլուծություններ պարզելու համար արդյոք ուսանողներն են սկսել լավ սովորել, թե քննությունների հեռավար կազմակերպումն է նպաստել կամ գուցե կան այլ պատճառներ, որոնց արդյունքում առաջադիմության ցուցանիշները բարձրացել են:

Արդյունքները քննարկվել է ուսանողների հետ, գրավոր բողոք չի եղել:

Գ. Ավետիսյանը ամփոփեց նշելով, որ ամբիոնների, ԿԾ ղեկավարների հետևողական աշխատանքների շնորհիվ խնդիրները արագ վեր են հանվում և լուծումներ ստանում:

Արտահայտվեցին.- Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը, Ա. Սարիբեկյանը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմանդրամի ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24. 11 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին – 2020-2021 ուստարվա աշնանային կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքները ընդունել ի գիտություն:

2. Լսեցին – 2020-2021 ուս. տարում նախատեսված ավարտական աշխատանքների ըստ ղեկավարների և ուսանողների բաշխված ցուցակների հաստատման մասին:

Գ. Ավետիսյանը ներկայացրեց, որ 2020 -2021 ուստարում ֆակուլտետի երկու մասնագիտությունների գծով նախատեսված ավարտական աշխատանքի թեմաների նախագծերը ուսանողներին է տրամադրվել կարգով սահմանված ժամկետներում: Որոշակի ճշգրտումներից հետո ամբիոններում կատարվել է ավարտական աշխատանքների բաշխում ըստ դասախոսների և ուսանողների:

Արտահայտվեցին - Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը:

Նրանք նշեցին, որ ամբիոնների նիստերում քննարկվել և ճշգրտվել են ինչպես առկա, այնպես հեռակա ուսուցմամբ ավարտական աշխատանքի թեմաները՝ հաշվի առնելով ուսանողների առաջարկությունները: Համաձայն անհատական ծանրաբեռնվածության «Ընդհանուր տնտեսագիտության» և «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնների նիստերում հաստատվել է ավարտական աշխատանքների ցանկերը ըստ ղեկավարների և ուսանողների ու ներկայացվում է ֆակուլտետի գիտական խորհրդի հաստատմանը/նախագծերը կցվում են/:

Արտահայտվեցին -Պ. Ասլիբեկյանը Ա. Պոտոսյանը:

Նրանք նշեցին, որ ավարտական աշխատանքների բաշխվածությունը իրականացվում է ճիշտ ընթացակարգով և ըստ ուսանողների ընտրության: Նրանք հավանություն տվեցին և առաջարկեցին հաստատել:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմանդրամի ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24. 2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին – հաստատել «Ֆինանսներ», «Զբոսաշրջություն» /առկա, հեռակա/ մասնագիտությունների 2020- 2021 ուստարում նախատեսված ավարտական աշխատանքների ըստ ղեկավարների և ուսանողների բաշխված ցուցակները:

3. Լսեցին - «Ֆիանանսներ» կրթական ծրագրի IV կուրսի ուսանուղուհի Նվարդ Մելիքսեթյանին «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման» մրցույթին առաջադրելու մասին /Զեկ Գ. Ավետիսյան/:

Գ. Ավետիսյանը ներկայացրեց, որ «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման» մրցույթին մասնակցելու հայտ է ներկայացրել «Ֆիանանսներ» կրթական ծրագրի IV կուրսի ուսանուղուհի Նվարդ Մելիքսեթյանը: Նա համապատասխանում է սահմանված պահանջներին. ունի բարձր առաջադիմություն /18.76 ՄՈԳ/, ակտիվորեն մասնակցում է մասնաճյուղի ՈԻԳԸ և ՈԻԽ կառույցների աշխատանքներին և ունի հասարակական բարձր ակտիվություն:

Արտահայտվեցին -Մ. Միքայելյանը, Ա. Սարիբեկյանը:

Արտահայտվողները դրական կարծիք հայտնեցին հայտ ներկայացրած ուսանողի մասին:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմանդրամի ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24. 8 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին՝- Երաշխավորել Նվարդ Մելիքսեթյանին մասնակցել «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման» մրցույթին:

Գիտական խորհրդի նախագահ՝ Գ. Ավետիսյան
Քարտուղար՝ Ա. Ալեքսանյան